



ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 12 ՄԱՅԻՍ, 1929

ԹԻՒ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐԾՆՔԻՆ ՀԻՄՆ

8

Միջախոս

Մեր նախորդ յօդուածներուն մէջ վերջապէս գտած էինք թէ կրօնական կեանքի ինչպէս նաեւ՝ կրօնքի հիմը մարդկային, բնութեան, գործունէութեանց մէջ կը գտնուի: Պարզ կերպով յատնած էինք նաեւ՝ թէ մեր քննութեան առարկան կրօնքի մէկ փոխադրութիւնը է, այլ մարդկային կեանքի մէջ տեսնուող կենդանի կրօնական գործունէութիւնն է:

Մարդկային բնութիւնը, սակայն, պարապութեան մէջ չի կրնար գործել: Այս ճիշդ է մարդկային բոլոր կարողութիւններու համար, և կրօնական գործունէութեան իր ընդունակութիւնն ալ չի կրնար բացառութիւն կազմել: Այս կրօնական բնութիւնը գրգռող միջավայր մը պէտք է ըլլայ, որուն ազդեցութիւնները ան պիտի փոխադարձէ իր գործունէութիւնովը: Այս միջավայրը կրօնական կեանքին երկրորդ մէկ հիմն է, այնպէս որ կրօնքի համար երկու հիմ կունենանք, որոնցմէ մէկը կը գրանուի մարդուն ներսը, իր բնութեան մէջ,

իսկ երկրորդը՝ իրմէ դուրս միջավայրին մէջ: Ինչ է այս միջավայրը:

Գիտենք թէ լոյսի ճառագայթներն են որ աչքը գործունէութեան կը մղեն, անոնք կը կազմեն աչքին մասնաւոր միջավայրը: Իսկ ձայնի ալիքներն են որ ազնջը շարժումի մէջ կը գնեն, ասոնք ալ ազնջին միջավայրը կը կազմեն: Առարկաները և զաղափարներն են որ միտքը գործի կը մղեն: Եւ անձերն են որ կարեկցութիւնը շարժումի կը մղեն: Ահա այսպէս մարդկային գործունէութեան իւրաքանչիւր ձեւը իր մասնաւոր միջավայրը ունի, կրօնական կեանքին մէջ ալ այսպէս է: Մենք պէտք է մասնաւոր միջավայր մը փնտոհնք, ուր մարդուն կրօնական բնութիւնը գործելու մղուի:

Ասոր զատական պատասխանը Յիսուսի կողմէ տրուած է: Այն միջավայրը, որուն ազդեցութիւնը մարդուն կրօնական բնութիւնը կը փոխադարձէ, Հոգի է, որուն համար «Աստուած» անունը կը գործածենք:

Մարդիկ միշտ այս չին հասկցած: Յիսուս երբ այս խօսեցաւ, ուրիշ ժողովուրդները թող, նոյնիսկ հրեաներով զաղափարներուն հակառակ եկան Ասոր խօսքերը: Անցեալ դարերուն մէջ կրօնքը ապրող մարդերը փայտի և քարի,

երկնային մարմիններու, անասուններու և թռչուններու առջեւ խոնարհած են: Մարդիկ մտքի և բարոյականութեան մէջ, զեղեկութեան և մշակութի մէջ, ազգի կամ մարդկային ընկերութեան մէջ փնտռած են այն բարձր գոյութիւնը՝ որ իրենց հոգիներուն միջավայրը պիտի բլար: Բայց Յիսուսի յըստակատեանութիւնը և Անոր որոշ հոգեւոր փորձառութիւնը խնդրին խորը թափանցեցին և յայտնեցին՝ թէ մարդկային հոգիին վերջնական միջավայրը Հոգի է և Հոգի պէտք է ըլլայ: Գործունէութիւնը և միջավայրը էապէս նոյն բնութիւնն են պէտք է ունենան: Աստուած հոգի է: Հետեւաբար պաշտումը հոգիով պէտք է ըլլայ, եւ մարդը հոգեւոր գործունէութեան և փորձառութեան մարդին համար վերստին ծընանկու է, որպէսզի Աստուծոյ հետ ազատ և կատարեալ հաղորդակցութեան մէջ ապրի:

Դուրսէն զիտելով՝ պիտի տեսնուի որ, մարդիկ բնական առարկաներու պաշտումէն սկսեալ պատմական շատ մը փուլերէն անցել են, մինչեւ որ առաջին Աստուծոյ մասին իմացական և բարոյական գաղափարներու հասած են: Ներսէն նայելով կրնայ ըստիլ որ, մարդիկ միշտ Աստուծոյ կարօտը զգացած են, փնտռած են զայն որ իրենցմէ հեռու չէ, «որ ըլլայ թէ խաբխափելով զինք զանեն. թէպէտեւ մեր ամէն մէկէն հեռու չէ: Վասնզի Անով կ'ապրինք և կը շարժինք ու կանք... և Աստուած տգիտութեան այս ատենները անտես ըրաւ:» Բայց այս երկու գաղափարներէն ալ աւելի՝ խոր է Յիսուսի այն յայտարարութիւնը՝ թէ իրականին մէջ Աստուած է որ կը փնտռէ մարդերը, «Հայրը իրեն այսպէս (հոգիով) երկրպագողներ կը պահանջէ:»

Ահա մենք հոս հասանք գործունէութեան մը, որ անհատին կրօնական բը-

նութիւնը և գործունէութիւնը կը զերգանցէ, և որ կրօնքին վերջնական հիմը կը կազմէ: Ահա այդ գործօն հոգին է՝ որ իւրաքանչիւր մարդկային հոգիին միջավայրը կը կազմէ: Այն հոգին՝ որ զիս անձնատուութեան և բարութեան կը մղէ, որ իմ մէջս գաղափարականներ կ'արժարծէ և կը զրդէ զիս բոլոր բարձր և սուրբ բաները կատարելու, այն հոգին՝ որ անյիշելի դարերէ ի վեր մարդերու մէջ իրենց տգիտութեան ատեններն ներգործիչ ազդեցութիւն ունեցած է, և որ այսօր նման կերպով կ'ազդէ բոլոր մարդերու հոգիներուն, կրօնքին վերջնական հիմն է:

Այսու հանգիւս, երկար ատեն ևս Անկէ անտեղեակ կրնամ մնալ. ես միայն զրգումները կրնամ գիտնալ և ոչ թէ անոնց աղբիւրը: Վերջը միայն կը հասկնամ՝ թէ իմ գինքը փնտռելէս աւելի Ան զիս փնտռած է, թէ մեկ իրարու մերձեցնող սէրը՝ աւելի իր ինծի հանդէպ տածած սէրը եղած է քան իմ իրեն համար ունեցած սէրս: «Աստուած միշտ իմ հոգիս կանխած է:» Ինքքն է որ զիս կանչած է, զիս քաշած է, ինծի սորվեցուցած է: Մէկը չի կրնար ինծի գալ եթէ զիս զրկող Հայրը զանիկայ չքաշէ:» Ըսաւ Յիսուս:

Կրօնքին հիմը ուրեմն կը գտնուի մարդկային հոգիին դէպ ի Աստուած ունեցած գործունէութեան մէջ, և վերջնականապէս, մեր հոգիներուն յաւերժեանս գործօն միջավայրին, այսինքն Հոգիին, նոյնինքն Աստուծոյ մէջ:

ՎԵՐՋ

Ճ. Է. ՄԷՐԻՍ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԵՐՇՆՁՈՒՄ
(Շար. և վերջ)

5. Ս. Գրքի մէջ Աստուածային ներշնչումի նախնանք:— Կան մարդիկ որ կը հաւատան թէ Ս. Գրքի մէջ «գաղա-

փար»ը Աստուածմէ ներշնչեալ է. բայց անոնք բառերուն ներշնչեալ ըլլալուն հաւատալու մէջ զժողովութեան կը մատնուին: Այս զժողովութիւնը կամ առարկութիւնը ընդունելի է, եթէ ան կը ծագի սա խորհուրդէն՝ թէ Ս. Գրքին բնագիրները ընդօրնակողները և զանոնք թարգմանողները սխալներ գործած են: Բայց այս առարկութիւնը շատ տկար կը մնայ, եթէ ան կը հիմնուի սա կարծիքին վրայ՝ թէ բառական ներշնչումը մարդկային խելքին համար անկարելի կը թուի կամ թէ Ս. Գրքի մէջ բանաստեղծութիւն, փոխաբերութիւն, և «այլաբանական քաջատրութիւն» կը գրանուին: Եթէ չ'առարկուիր թէ Աստուած իր մարգարէներուն և առաքեալներուն կրնայ պատգամներ ներշնչել, ինչ դժուարութիւն կը մնայ ընդունելու թէ անոր բառերն ալ կրնայ ներշնչել: Ս. Գիրքը յայտնի կերպով կը սորվեցնէ այս կէտը. «Այս բաները կը խօսինք, ոչ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա Հոգիին սորվեցուցածներովը.» Ա. Կորն. 2. 12: Ինչո՞ւ Աստուած զրոգի չ'ը կարենայ յայտնել իր «միտք»ը, բայց չկարենայ յայտնել անոր բառերը, որ իր միտքը չիտակ հասկցուի: Չաղբուրնք արդիապաշտութեան (մօտընիզմ) հոսանքէն, որ 30-40 տարի առաջ Եւրոպայի մէջ ծագում առած իսկ վերջերս Ամերիկայի մէջ տարածուած է, և որուն ալիքները մինչև մեզի հասած են: Այս շարժումը որ առաջին անգամ Եգիպտի պարտէզին մէջ սկսած է, Քրիստոսի ժամանակին և ապա քրիստոնէական առաջին դարերուն մէջ Սէլսըսի, Փօրֆիրիի և ասոնց նման քրիստոնէութեան ուրիշ թշնամիներուն մէկ արձագանգը կրնայ նկատուիլ: յուսաբեկ ըլլալով չխռովինք: Այս գիրքը շատ Վոլթերներ և Ինկերսուներ տեսեր և թաղեր է, անոնց համար շատ կը ցաւինք: «Նոր Աւետարներ»ի

յարգելի խմբագիրը մեզ կը քաջալիզէ, Նոյ. 10. 1928 թիւին մէջ ըսելով որ, «բառին բուն առումով... մեր մէջ արդիապաշտ չկայ:» Եթէ այսպէս է շատ կ'ուրախանանք. բայց պէտք է շատ նանք որ Աստուածաշունչի, Քրիստոսի և մեր կրօնքին թշնամի եղողներուն քրիստոնէութիւնը՝ արդիացնելու ֆեաւակար միտումը մեր մէջը յստաջ չգայ, որպէս զի «Սին» թերթին բողոքականութեան վերադրած ամբաստանելի կէտերուն տեղի չմնայ: Ես անձամբ յիշեալ թերթին ամբաստանութիւններուն դէմ կը շրջադարձ, և կը հաւատամ որ մեր հոգեւորականներուն մէջ իմ նմաններս քիչ չեն:

Սիրելի եղբայրներ, ինչպէս որ մեզի Եւրոպայէն և Ամերիկայէն գործածուած հին հազուսաներ կուզան, նոյնպէս ալ գործածուած կրօնական հազուսաներ կուզան, որոնք՝ զոյնը չստով փոխուող ներկերով ներկուած են. չընդունինք և ետ վերադարձնենք զանոնք. քանզի տեսնուած է որ անոնք թունաւոր մանրէներ կը պարունակեն: Մեր սուրբ պարտականութիւններէն մէկն է մեր ժողովուրդները անոնցմէ զզուշացնել: Այս քանդիչ շարժումը նոր չէ, նոր անունով մեր հին թշնամին է ան. պատմութիւնը և անաչառ քննութիւնը շատ պարզ կերպով կը փաստէ այս կէտը:

6. Կ'երեւի թէ մեր մէջ կարգ մը մարդիկ կը վարանին Ս. Գրքի բոլոր մասերը Աստուածմէ ներշնչեալ նկատելու, զըտնել կարծելով որ Ս. Գրքի մէջ մեր կարծիքին և գաղափարին և թէ մեր յաւուրսիս չափանիշին իբր թէ հակասող գաղափարներ և վարդապետութիւններ կան: Պէտք է Ս. Գիրքը սովորական խելքէն բարձր «իմաստութեամբ և կատարեալ միտքով» ուսումնասիրել, զայն չիտակ հասկնալու և անոր խոր գաղտնիքները գտնելու համար, քանի որ ան Աստուծոյ կողմանէ պատրաստուած

գիրք մ'է: Երբ զեղարան մը մտնելով հոն շատ մը զեղերու հետ միասին կարգ մը վտանգաւոր թոյներ ալ տեսնենք, կառավարութեան չենք գիմեր զեղապործին զէմ բողոք բառնալու համար զայն իբր ռճրագործ ներկայացնելով, մենք կ'ընդունինք թէ այդ թոյներն ալ դարմանումի մէջ կարենոր տեղ մ'ունին: Եւ պարզամիտ քրիստոնէի մը, որ իր կեանքին մէջ երբէք բժշկական գիրքեր չէ տեսած, բժշկական կարգ մը գիրքերու մէջ դրուած շատ տգեղ և հակարարոյական թուող պատկերներ եթէ ցոյց տրուին, հաւանականաբար ան պիտի կարծէ թէ այդ գիրքը դժոխքէն զրկուած է անբարոյականութիւն կամ ոճիր սորվեցնելու համար: Ս. Գիրքը շատ ընդարձակ բարոյական զեղարան մը և բոլոր աշխարհի համար վերաբուժարան մ'է: Ան իր մէջ ամէն դարու և ամէն անհատի պէտքին համեմատ զեղու դարման կը պարունակէ. միայն թէ զայն կիրարկել պէտք է: Ուրիշք ալ երբէք չեն կրնար Ատուծոյ բնութեան և Անոր սէրին պատշաճեցնել սա պարագան՝ թէ հանդերձաւի մէջ մեղաւորները արդարներէն դատուելով յաւիտենական տանջանքով պիտի պատժուին:

Աստուծոյ հանդէպ ասոնց տածած յարգանքը գնահատելի է. Պետրոս ալ խաչը չէր կրցած Յիսուսի վալեցնել: Ս. Գիրքի չէջ, սակայն, յաւիտենական մահը այնչափ որոշ է որչափ որ են յաւիտենական կեանքը և փրկութիւնը: Այս երկուքէն ի՞նչ է մէկը մերժուի միւսն ալ պէտք է մերժուի: Այս տիեզերայնական (universalist, ամէն մարդ պիտի փրկուի) վարդապետութիւնը ընդունողները երբէք չեն առարկեր ոճրագործներու եւ աշխարհի խաղաղութիւնը խանգարողներու համար պատրաստուած կախաղաններու և բանտերու դէմ, և նոյնիսկ կը հաստատեն զանոնք բայց երբէք յօժար չեն ոչ թէ հանդերձ-

եալ կեանքի յաւիտենականութիւնը այլ նոյնիսկ երկրային կեանքի կարճ տարիները անոնց հետ միասին ապրել: Գառնուկին քով զայլ պահելը այնչափ զէմ չէ՞ խղճին և արդարութեան, որչափ որ է զայլին քով գառնուկ պահելը: Աստուածամասնէրը (theosophist) ասոր իբր թէ աս դարմանը գտած են, որ մարդերը 70 միլիոն տարիներու միջոցին 800 անգամ նոր մարմիններով աշխարհ պիտի գան, իրենք զիրենք պիտի բարեփոխեն, Աստուծոյ մէջ կատարեալ և հաւասար պիտի ըլլան եւ բոլորն ալ պիտի փրկուին: Պէտք է Ս. Հոգիին և անոր առաջնորդութեան ապաւինինք Ս. Գիրքը իր ճիշդ առումովը հասկնալու համար:

Հաւատադեալ բարեկամներ, մեր է'ն կարեոր պէտքը այսօր Ս. Հոգին է. միայն Ան է որ մեզի պիտի յայտնէ ամէն ճշմարտութիւնը եւ զաղանքները: Աստուածաշունչը այս բանալին մեզի կուտայ ճշմարտութեան կամ կեղծը գտնելու համար: Քարոզիչին պէտքը այս է, ժողովուրդին պէտքը այս է, — Ս. Հոգին ունենալ: Իցիւ թէ Ան ալ մեզ ունենար և մեզի տիրանար: «Իսկ երբ ճշմարտութեան հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի: Աղէ՛լանդրիս Ս. ՄԵԼԴՈՆԵԱՆ

ԵՐԲ ԺԽՈՐՆ ՈՒ ԱՂՄՈՒԿԸ ԴԱԴՐԻ

Մը. Բօճըր Պէպսըն նամակի մը մէջ այսպէս արտայայտուած է. «Ուրիշներուն մասին խօսել չեմ ուզեր, բայց իմ մասին կրնամ վկայել թէ իմ բոլոր ստեղծագործող զաղափարներս առանձնութեան մէջ յղացուած են: Յիսուսի անոնք առանձնութեան մէջ գործադրուած չեն, որովհետեւ մարդ մը կրնայ ծրարել երբ առանձին է, բայց չի կրնար հոն գործադրել: Գործադրութեան վայրը գուրսն է, ընկերութեան մէջ: Անոր համար կ'ըսեմ թէ կեանքի բոլոր պա-

րազաներնը, մենաստանէն մինչև մանարան իրենց օգտակարութիւնը ունին, թէև բացորոշ է որ մանարանը չափազանց չափ, իսկ մենաստանն ալ չափազանց քիչ կարևորութիւն կ'ստանայ: Կիրակին պահելը լսկ կրօնական պահանջ մը է, այլ նաև տնտեսական պէտք մը: Զարգացած և յառաջդրեալ ազգ մը կը պահանջէ իր ժողովուրդէն որ իրենց ժամանակին մէկ մասը խորհուրդածութեան և խաղաղ մտածումի տրամադրեն:

«Աշխարհի յառաջացումը կարելի դարձնող բոլոր ստեղծագործական ծրարակրները առանձնութեան մէջ դարձնուած են: Գրասենեակի և կամ տեւէ գործի վայրին մէջ արժէքաւոր գաղափարներու յղացումը գրեթէ անկարելի է: Ամբոխը իր օգտակարութիւնը ունի, բայց վերաշինող ծրարակրներու յղացումի համար և ինքնատիպ ներշնչումներու համար ամբոխին ներկայութիւնը անօգուտ և շատ անգամ փնտաւար է: Այսպէս Ամերիկան կերտող գաղափարները ժողովուրդէն հեռու, անտառներու մէջ և գետափներու քով ներշնչուած են: Այս պատճառաւ ևս կոչ կ'ընեմ առանձնութեան, որ ներքին մեծ ուժերու անսպառ ազդեցներ կան, ներքին հարստութեան մեծագոյն հանքեր կան պահուած և որ հոգեւոր աճումի լայն պատենութիւններ կան ամէնուն մատչելի:»

Ասոր վրայ կրնանք աւելցնել՝ Փրօֆ. Հուայթհէտի զիտողութիւնը: Ան ըսած է. «Եթէ դու երբևէ առանձին չես, նաեւ հոգեւոր ազգես:» Հաւաքական եռանդներ, արթնութիւններ, ծէս և արորողութիւններ ասոնց ամէնը կրօնքի անցողական ձեւերն են: Անոնք օգտակար կրնան ըլլալ կամ փնտաւար, վերին հեղինակութեամբի զօրու կրնան ըլլալ և կամ ալ ժամանակաւոր կարգադրութիւն մը, բայց կրօնքին նպատակը ասոնց ամէնէն վեր է:

Երբ ծանր գործերով ծանրաբեռնուած մարդիկ այս խօսքը լսեն և ընդունին՝ այդ ժամանակ աւելի լեցուն հոգեւոր կեանքի ճամբան պիտի կրնան գտնել, և իրենց պիտի յայտնուի աւելի կենսատու զօրութեան ազդեցութիւնը, զոր մեր ազմկարար դարը շատ անգամ կը ծածկէ մեզմէ: Եւ անոնք նոր տեսիլներով, նոր գաղափարներով և ներշնչումներով, զուրս պիտի գան իրենց առանձնութենէն որ իրենց պիտի պարզեւէ ներքին ուժ մը՝ աւելի աշխուշ կարողութիւն և աւելի զարգացած մշակոյթ մը կերպելու:

ՅՈՎՀ. ԱՐԴՍԻՆԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

Գրիստոնէութեան առաջին դարուն Ս. կրօնը մուտք գտած էր Հայոց մէջ, սակայն երբեմն պիտական հալածանքը, երբեմն ալ քուրմերու չկամութիւնը և ազէտ ժողովուրդին անորոշութիւնը տեղ տեղ գրեթէ ջնջած էին Յիսուսի վարդապետութիւնը և սեզանը և անոր տեղ վերստին կանգնած՝ Անահիտի և Դիմիտրի, Վահագնի և Արամազդի միահանդէսը: Այնպէս որ Ս. Գրիգոր Լուսաւորիչի ձեռամբ Հայոց կրկին դարձը պատմութեան մէջ երկրորդ Դարձ կամ Աստուծոյ երկրորդ Այցեղութիւնը կը կոչուի:

Գրիգորի հայրը Անակ կը կոչուէր իսկ մայրը Ոգուհի: Անակ Պարթեւական ծագում ունէր և պարսից թագաւորական ցեղէն ըլլալով ժամանակին արքայից արքային, Արաշիրի հրահանգով և թելադրութեամբ Հայաստան կ'գտնէր, Հայոց թագաւոր Խոսրովը սպաննելու և Հայաստանը Պարսկական գերիշխանութեան տակ ձգելու համար: Անակ, իր այդ սագայեկական ծրարները գործադրեց և սպաննելով Խոսրովը երբ խոյս կուտար, մահամեղձ թագաւորին

հրամանով ինքը և իր ամբողջ ընտանիքը սուրէ անցուեցան, այդ սպանդէն հրաշքով ազատեցաւ միայն Անակի որդի Գրիգոր, միամեայ երախտն որ Սոփիա սանտուին ձեռքով կհսարիտ փախցունելով հոն Եւթաղ անուն Յոյնի մը ձեռակմը իբր Բրիտտոնեայ մեծցուեցաւ։ Որով Գրիգոր ծնած կ'ըլլայ 239 թուականին։

Ոմանք Անակը և հետեւորար Գրիգոր Լուսաւորիչը Յոյն կը կարծեն, ոմանք ալ Հայ. հաւանականօրէն այս վերջինը աւելի ընդունելի ըլլալու է, նկատելով Անակը Պարթև հայկաւն նախարար մը և Գրիգորն ալ իր զաւակը։ Դժբախտաբար բան մը չենք գիտեր Գրիգորի մանկութեան մասին։ Համայնագատում Խորենացի կը վկայէ որ քսաներկու տարեկանին Գրիգոր ամուսնացած էր Դաւիթ անուն մէկու մը աղջկան, Մարիամի հետ (261ին) որմէ երկու զաւակներ կունենայ, Վրթանէսը (261ին) և Արիստակէսը (264ին), անկէ վերջ փոխադարձ համաձայնութեամբ այր ու կին կը բաժնուին իրարմէ (267ին) Մարիամ ճգնաբան մը կը քաշուի իր մեծ զաւակին հետ իսկ Գրիգոր Տրդատի մօտ կ'երթայ, անոր ծառայելով իր հօր գործած ոճիւրը քաւելու առաջադրութեամբ։ Կ'ըստի թէ Գրիգոր՝ քարաուղարը եղած էր Տրդատայ. որովհետեւ ըստ Զենոբ Գլակի, Գրիգոր ասորի և հելլեն դպրութեանց ծանօթ էր և կարող այդ պաշտօնը կատարելու։

Անակի ոճիւրէն վերջ Հայաստան Խոսրովի պէս քաջ թողաւորէ մը զրկուած ըլլալով Արտաշիւրի բանակներուն ռաից կոխան եղաւ, այնպէս որ շատ մը հայ իշխաններ և նախարարներ զանազան ամբարձրաններ ապաստանեցան իսկ Արտաւազդ Մանգաղունի նախարարը, Խոսրովի որդին Տրդատը Հոռոմ փախցուց որ ան կը զարգանաւ մարմնով և միտքով, մասնաւորաբար հռոմէական զին-

ւորական կրթութիւն մը ստանալով։ Այսպէս 10 տարի հոռոմի մէջ ապրելէ վերջ, ուր մեծամեծ քաջութիւններ ալ կը վերագրուին իրեն—Դիոկղզտիանոս կայսեր սիրտը շահելով հռոմէական զօրք կ'առնէ անկէ և Հայաստան կը դառնայ զրաւելու համար իր հօրենական յափըշտակուած գահը։ Մինչևկեսարիա գալով շատ մը հայ նախարարներ զիմաւորեցին Տրդատը և հետզհետէ զրաւելով հայկական գաւառները տէր դարձան իրենց նախնեաց ժառանգութեան։

Հոս կրկնենք որ, այս օրեր ամբողջ Հայաստան զրոթէ հեթանոս դարձած էր և երբ Տրդատ Եկեղեցաց գաւառը հասաւ, Երիզայի նշանաւոր կուստան մէջ Անահիտին մեծամեծ զոհեր մատուցուեցան, ուր թագաւորը հրամայեց որ Գրիգորն ալ արքայական սեղանէն ծաղկէ պսակներ առնէ և դաւար ոտտերու հետ տանի Ոսկեմայր Անահիտին մատուցանէ։ Գրիգոր մերժեց թագաւորին հրամանը, թէ և գիտէր Տրդատ որ Գրիգոր քրիստոնեայ էր արդէն, սակայն այնքան ալ չէր բռնանար անոր վրայ, բայց այս պարագային իր յաղթութեան և արժանապատուութեան դէմ վիրաւորանք մը նկատելով Գրիգորի յամառ մերժումը՝ հրամայեց աստիճանազրկել և չարչարանքներու ենթարկել զայն։ Զարսիրտ լիւու մըն ալ, մի ոմն Տաճատ նախարար, որուն ծանօթ էր Գրիգորի ծագումը, զնայ յայտնեց Տրդատի թէ՛ Գրիգոր զաւակն էր այն ոճրագործ Անակին, որ Խոսրովը սպաննելով Հայս ստանը այնքան երկարատե կժբախտութեանց և օտար կրօնիկներու տակ ճգնուելու ենթակայ դարձուցեր էր։ Տրդատ իմանալով զայն, չափազանց զայրացած հրամայեց սատուկացնել Գրիգորի չարչարանքները և բազմացնել անոնց տեսակները։

Առասպելական և ասորական բարբարոս տանջանքներ տրուած ըլլալուն

մասին կը խօսուի, որոնցմէ մի քանի-ներն իսկ յիշել սարսուռ պիտի պատ-ճառէր ամէնէն քարսիրտ մարդոց ան-զամ մենք վանց կ'ընենք անոնց թուար-կումը խնայելով ընթերցողներու ջիւղե-րուն: Ամէն տեսակ սատանայական հնարք և չարչարանք անօգուտ կը դառ-նան և Գրիգոր անյողղող կը մնայ Գրի-տոսի անունը օրհնեցողիւ մէջ, ինչ որ ապշահար կը թողու զայն չարչարանքի և թարկող հեթանոս հայերը, երբ կը տեսնէին որ չէի երկաթէ շամփուրնե-րուն տակ ճենճերող Գրիգոր, Յիսուսի անունով կը ներէր իր դահիճներուն: Յիշեալ չարչարանաց վայրը կը նկատուի՝ երկնի քաղաքէն մօտ 9—10 մղոն ա-րեւելք Մեղրացիի գիւղը, ուր լեռան ստո-րոտը երկու վանքեր ալ շինուած են վերջերը, Չարչարանաց և Լուսաւորիչ ա-նունով:

Այս դժոխային տանջանքներէն վերջ, խեղճ Գրիգոր կը դատապարտուի Ար-տաշատի խորվիրապը նետուելու (337 ին) և հոն զրկուելու ատեն կ'ըսուի թէ կարին ալ հանդիպեր կամ գիշեր մը հոն օթեաւներ է: Սորվիրապը մահապարտ-ներու յատուկ գետնափոր բանտ մըն էր կենդանի մեռելները ողջ ողջ և տուայ-տանքներու մէջ սպաննելու համար յար-մարցուած: Ներկայիս խորվիրապը Ար-տաշատի բլրան վրայ, քարաշէն մօտ չորս մէթր տրամագծով խոր վիհ մըն է, կ'ըսուի թէ աւելի խորունկ է եղեր ժա-մանակին: Հիմա 25 — 30 աստիճան սանդուխով մը կարելի է իջնել մէջը: Վիրապին վրան գոցուած և քովի կը մա-տուռ մը շինուած է:

Այսպէս Գրիգոր կը ձգուի վիրապը ուր կը մնայ 14 տարի, — ճիշդ նման ծօն Պրնեանի — Աստուածային այցելութեան և ներգործող ոյժին շնորհիւ կ'ապրի այդ անհանդուրժելի պայմաններուն տակ: Կ'աւանդուի որ կին մը ամէն օր ժուժմը կերակուր կուտար անոր, որուն համար

կ'ըսուի թէ բանտապահին կինն էր, բայց կերակուրը կը հոգացուէր Տրդատի հա-րադատ քոյրը Սոսրովիգուիտի կողմէ: Որովհետեւ Աստուածային՝ հարմանալի կարգադրութեամբ մը, Գրիգոր Սոսրո-վիգուիտը քրիստոնեայ դարձուցած էր վաղուց, երբ պալատին մէջ կը ծառայէր իւրեւ արքայական քարտուղար:

Հաջիպ

ՌՇՏՈՒՆԻ

(Շարունակելի)

ՆԵՐՔԻՆ ԱՒԵՏԱՐԱՆՁՈՒԹԻՒՆ

Մեր Տէրը Յիսուսի վերջին և էն զօ-րաւոր պատուէրն էր Աւետարանի քարո-չութիւնը: Մարմինը զօրաւոր, կայտառ և զործօն կ'ըլլայ եթէ սիրտը առողջ է և հանդարտօրէն կ'ընայ գործել: Աւե-տարանը քարոզէ, բանտերը միշտ փակ կը մնան, ոստիկաններու, զինուորնե-րու, պահակներու և լրտեսներու երբէք պէտք չի մնար, եւ գինեաւանները կը փակուին, հանրատունները գոյութենէ կը զազրին, յիմարանոցները պարապ կը մնան և զիշերուայ սարսափը կ'ան-հետանայ: Աւետարանը քարոզէ և տու-ներու մէջ կոխները կը վերջանան, ե-կեղեցիներու մէջ դառն վէճեր կը զազ-րին, ծնողաց և զաւակներու ցաւերը վերջ կը գտնեն: Թուփի տեղ չոճի և եղիճի տեղ մրտենի կը բուսնի:

Քարոզչին միակ գործն է Աւետարա-նը քարոզել և մարդերը Յիսուսի հաղոր-դակցութեան մէջ գնել: Եկեղեցիին գե-րագոյն պարտականութիւնն է մարդերու փրկութիւնը ապահովել: Այն առաք-եալը, որ «Վայ ինձ եթէ Աւետարանը չքարոզեմ» կ'ըսէ, իսկապէս հասկցած է մեծագոյն և յաւիտենական վայր: Մենք յաւիտենական վայր ներքեւ պի-տի գտնուինք, եթէ Աւետարանը չքա-րոզենք մեր կեանքով, խօսքով և անհը-րածեշտ դրամը պատրաստելով:

Սուրբոյ Հայ Աւետ. Եկեղեցիները

Միութեան տարեկան ժողովին մէջ որոշած էին տարեկան առնուազն 130 օսմ. ոսկի հանգանակել, ներքին աւետարանչութեան համար: Այս գումարը պիտի գործածուէր Աւետ. եկեղեցիները պարագնելու, բեմերու և եկեղեցական շէնքերու գանազան պէտքերը զոհացնելու համար: Այս կը նշանակէ որ Յունիս 1, 1927—Յունիս 1, 1929 ի երկու տարուայ շրջանի միջոցին մեր եկեղեցիները 260 օսմ. ոսկի պիտի հանգանակեն: Միութեան կողմանէ ընտրուած ներքին Աւետարանչութեան մասնախումբը յարմար կերպով որոշած էր լարաքանչիւր եկեղեցիին վճարելիք բաժինը, և զանոնք եկեղեցիներուն յայտնած էր: Հաստատ կերպով կ'ակնկալենք որ լարաքանչիւր եկեղեցիին իր բաժինը լրիւ պիտի վճարէ այս երկու տարուան միջոցին: Տրուած որոշումին համեմատ հանգանակուած գումարները գրութիւնս ստորագրող քարտուղարին պիտի ղրկուէր, և անոնց փոխարէն զանձապահի կողմանէ ստորագրուած ընկալագիրներ պիտի տրուէին: Մինչև հիմա մեզի ծանօթ վճարեալ գումարները կը ներկայացնենք հետեւեալ ցանկի մը մէջ: Մի քանի ամիս առաջ այս ցուցակին հրատարակումը որոշուած էր Սպասեցինք որ կատարեալ ցանկ մը ներկայացնենք: Շատ հաւանական է որ եկեղեցիներ այս նպատակաւ հագանակութիւն կատարած ըլլան, և պատճառով մը տակաւին զանձապահին յանձնած չըլլան, և կամ եթէ յանձնուած է իսկ մեզ տեղեակ պահած չըլլան: Կը յուսանք որ ամէն մէկ եկեղեցի և քարոզիչ բոլոր ոչ մի պիտի աշխատին մինչև յառաջիկայ Յունիս 1 իրենց բաժինը լման վճարելու: Այս հանգանակութիւնը կարելի չէ միայն զանձանակներու հասոյթով յաջողցնել, ասոր համար պէտք է մասնաւոր և անձամբ ջանքեր թափել:

Եկեղեցիի անուն	Վճարում 27 Յիւլիանի վերջ		2 Տարուայ վճարումս
Հալէպ Ազգիկիչէ	29.00		54.00
Հալէպ Համիտիյէ	28.44		30.00
Ճարապուլուս	1.50		6.00
Գըրըզիսան	1.56		6.00
Պէյլան	1.00		5.00
Իսկէնտէլուն	1 00		10.00
Ֆարթըրը	2.00		10.00
Քէսուպ	5.00		14.00
Պիթիաս	2.00		7.00
Էքիզօլուզ	1.00		8.00
Գալատուրան	1.00		4.00
Եօզուն օլուզ	2.27		3.00
Թարապուլուս	1.50		4.00
Լաթաքիա	0.00		2.00
Ջահլէ	2.00		8.00
Պէյրութ քաղաք	7.92		40.00
Պէյրութ քէմի	11.69		24.00
Տամասկոս	6.88		14.00
Հօմա	2.06		6.00
Ճիւնի	1.02		8.00

(Վեր.) Ա. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ

ԴԻՄԱԴԻՈՒԹԵԱՆ ՈՅԺ

(Շարունակութիւն և վերջ)

4. Երբեմն ալ երբ գործարան մը աւրուի, միւս ընկեր գործարանները անոր օգնութեան կը փութան, զանազան միջոցներով իրենց յոգնած կամ վերադարձնելու ժամանակ կուտան հանգստանալու և բուժուելու: Զոր օրինակ սիրտ, երկամուռնք մորթ, թոքեր, լեարդ և այլն իրարու կ'օգնեն:

5. Այս ապրող մեքենային մէջ շատ մը կարեւոր հեղուկներ կան՝ զոր օրինակ արիւն, ուղեղաղնածուծային շիճուկը և այլն, որոնք շատ մը կարեւոր պաշտօններ ունին: Ասոնք են որ գործարաններուն անունը կը տանին, փրկուած և այլած թունաւոր նիւթերը կ'արտաքսեն: Ասոնք թէպէտ իրենց քիմիական բաղադրութեամբ իրարմէ կը տարբերին, բայց բաց ի երկու քէն բոլորն

ալ որոշ չափով մը կալաքարային են: Մարմինն մէջ գտնուող բոլոր այս նուրբ և զգայուն զործարանները կամ մասամբ կամ ամբողջովին այս հեղուկներով շրջապատուած են: Երբ այս հեղուկներու քիմիական բաղադրութիւնը կը փոխուի այս զործարանները չեն կրնար ապրիլ: Երբ աւշային դրութիւնը թթու պարունակէ անբնականոն տարրեր վիճակ մը և հիւանդութեան նշաններ երևան կուգան: Զոր օր. շատ զրազած բլլալնուս պատճառաւ մասններու մէջ acid lacticի տեսակէն թթուներ յառաջ կուգան և մենք յոգնութիւն կգալով անհանգիստ կ'ըլլանք: Սաամոքսի և աղիքներու մէջ խմորուած նիւթերու և մանրէներու ազդեցութեամբը շատ մը acid phenicի և ածխային թթուի տեսակէն թունաւոր հեղուկներ կ'արտադրուին և արիւնի խառնուելով փնաս կը պատճառեն: Այս ապրող մեքենան այս թթուներու ազդեցութիւնը չէզոքացնելու համար իր մէջ, մանաւանդ լիարդի մէջ շատ մը կալաքարային ոյժեր ամբարած է:

6. Մինչ այս մեքենայի բաղադրան զործարաններն ու մասերը իրենց սովորական պաշտօնները կը կատարեն, անոր մէջ շատ մը բնական և անբնական փոփոխութիւններ տեղի կ'ունենան: Այս զործարաններէն մէկը կամ երկուքը երբեմն երբեմն կը սխալին իրենց պաշտօնակատարումին մէջ և պակաս կամ աւելի հեղուկներ կ'արտադրեն: Ահա այն տանն այս ներգործիչ նիւթերու չորութեան կամ շատնալուն պատճառաւ շատ մը անբնական երեւոյթներ կը նշմարուին մարմինն մէջ: Ասոնց լուսւոյն օրինակներն են անցնչուդ գեղձերը, որոնք են վահանազեղձ (Thyroid)... ., մակերիկամունք (Adrenalin), Բանկրէաս (Pancreas) ևայլն:

Մի քանի բառերով կ'ուզենք յիշել այն ազդակները որոնք այս մեքենային ոյժերը կը պակսեցնեն:

1. Այսօր շատ մը մարդոց ենթարկուած տկարութիւններուն պատճառը իրենց նախահայրէն ժառանգած տրկարութիւններն են: Պէտք է լաւ գիտնաք որ հիւանդութեան պատիժը միայն իր ենթակային մէջ չի սահմանափակուիր, ան սերունդէ սերունդ կը փոխանցուի: Ուրեմն, մտածէ որ կեանքիդ գէժ մեղանշումներովդ քու սերունդիդ և ուրիշներուն փնաս կը պատճառես:

2. Կլիման, միջավայրը զարմանալիօրէն կազդէ մարմինն վրայ: Բայց այս ալ ճիշդ է որ մարդուն ազդեցութիւնն ալ շատ է իր միջավայրին վրայ:

3. Փոխանցիկ հիւանդութիւններ, ֆրանկախա, յօդացու, ջերմամիզութիւն, և բոլոր տենդերը:

4. Ոգելից ըմպելիներ եւ ծխախոտ:

5. Բոլոր ֆիզիկական և մտային ոյժերու, սեռային բնազդին զէչ զործածումը, շատակերութիւն, ազահութիւն, անկանոն կերպով և բազմատեսակ կերակուրներու տեղ զիմադրութեան ոյժը կը պակսեցնեն: Մարդկութեան մէկ մասը անօթքութիւնէն իսկ ուրիշ մէկ մասը շատ ուտելէն կը մեռնի:

6. Մարմնամարդի պակասութիւնը կամ անկանոնութիւնը:

7. Զղույն կեանք, վիշտ, վախ, անքննութիւն, խղճիազանապ, յոռետեսութիւն և նման վիճակներ կ'թէ տեւական հանգամանք մ'առնեն մարմինը իր զիմադրութեան ոյժը կը կորսնցնէ:


8. Մարմնական և մտային անհաբուութիւն:

Այս բարդ և նուրբ մեքենան կ'թէ այսպիսի հակառակդ շաղկապական պայմաններու ենթարկուի չի կրնար ինքզինքը իր թշնամիներուն գէժ պէտք եղած չափով պաշտպանել: Հետեւաբար բոլոր դրութիւնը կը խանգարի, քանզի ոյժերը կը յաղթանակեն և կեանքը կը վերջանայ:


(ՏՕՔԹ.) Ֆ. ՅՈՎՆԱՆԵՍՆ

ՀԱԼԷՊ ԳՈԼԷՃԻ ՔԱՅԼԵՐԴՐ

ԵՂԱՆԱԿԵՑ Ր. Ա. ՃԵՊԷՃԵԱՆ



1 Արիք տը—ղաք ի մի բե—րան, զուարթ եր—գինք Թող մեր սըր-




տեր հըրճ-ուին ցըն—ծան թըն—գայ եր—կինք... Դուն մեզ տը-



ւիր, ճըշ-մար. տու թեան ո՛վ մեծ տաճար ինչ զեհ խո հեր սկըզբունքներ



... ազ-նիւ հան ճար: Իր-բե սր-դիք քո ճըշմա—րիտ և հա—րա-



զատ իր-բե սրդիք քո ճըշ—մա-րիտ և հա—րա-զատ քաղենք յա-



ռաջ միշտ զէ-պի վեր բայց յարազատ յարա-զատ

Շատ տարիներ նըման մի, աստղ չող լուսավառ,

Փարատեցիր արեւելեան մութն ու խաւար.

Հող չէ քեզ բաղդ, պանդրխտացուց օտար ափեր,

Շարժէ՛ յառաջ, գործէ՛, ծաղկէ միշտ պատուաբեր:

Իրբեւ որդիք քո ճշմարիտ և հարազատ,

Բալենք յառա՛ջ, միշտ զէպ ի վեր բայց յար ազատ:

Քո պանծալի դոներդ բաց են ամէն ազգին,

«Հալէպ Գոլէճ» անուն սիրուն և թանկագին.

Կեցցե՛ն յաւէտ, մընտա կանգուն չէն ու պայծառ,

Ահա կ'իջնայ ճակատիդ վըրայ գափնի դալար:

Իրբեւ որդիք քո ճշմարիտ և հարազատ,

Բալենք յառա՛ջ, միշտ զէպ ի վեր բայց յար ազատ:

(ՏՕԲԹ.) Ա. ՃԵՊԷՃԵԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՆՁՆԱԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ ԸՐ

Ատենօք Հար. Ֆրանսայի մէջ գիւղ ո՞ր կար որուն բնակիչները ջուրի սակաւութենէն միշտ կը տառապէին: Ամառը անձրև չ'տեղաց, հարիւրաւոր մարդիկ, պղտիկներ և անասուններ ջուրի չգոյու-թենէն մեռան:

Նոյն գիւղին մէջ բարեկեցիկ, կոյ-տառ և երջանիկ երիտասարդ մը կ'ապ-րէր որ սիրուն և հարուստ օրիորդի մը հետ ամուսնանալու պատրաստ էր: Այս երիտասարդը մէկէն իր ընթացքը փո-խեց. նշանածէն զատուեցաւ, հագուստի ուտելիքի և չորձութիւններու մա-սին սովորութիւնները բոլորովին փո-խեց, սկսաւ շատ պարզ, աղքատի մը պէս հագուիլ, շատ հասարակ կերակու-րներու տիւր, ամէն հաճոյքէ, վայելքէ. ըն-կերային յարաբերութիւններէ ետ կե-ցաւ: Յնչոտիներ հագուելու սկսաւ: Ամէն օր չարաչար կ'աշխատէր, կը շա-հէր, սակայն շատ քիչ կը ծախէր:

Ասոր իբր հետեւանքը իր հարուստ, ազնուական և պատուաւոր բարեկամ-ները գինքը ձգեցին: Պանդոկներու մէջ շատ աղքատի ո՞ր պէս կ'ապրէր: Քա-ռասուն տարի այսպէս շարունակեց: Ծերացաւ, փողոցի տղաքները սկսան գինքը ծաղրել: Վերջապէս այս մարդը ցնցոտիներու մէջ, խոտէ անկողնի վրայ, փլատակի մը մէջ մեռաւ:

Ձիւքը վերցուցին. յարգէ բարձին տակ մեծ գումար մը և կտակ մը գտան, որուն մէջ գրուած էր, թէ սոյն գումա-րը գիւղէն բաւական հոռի լիւններու մէջ կողոպտատ, պող և մաքուր աղ-բիւրներու ջուրերը գիւղ բերելու գոր-ծածուի: Այսպէս, գոմարը կտակին համեմատ գործածուեցաւ, աչն ջուրերը գիւղ բերուեցան և բնակչութիւնը ջու-րի սովէն յաւիտեան ուզատուեցաւ: Այս մարդուն անձնաւորութեան, եթէ ոչ կերպը, գ'թ հոգին օրինակելի է:

ԿՐԱԿԻՆ ԵՐԿԸ

Հետեւալ պատմութիւնը պատմուած է Տիկ. Չարլս Սփըրճընի կողմանէ, որ 25 բարիներէ աւելի տտեմէ միվեր կը տառապէր մարմնապէս:

Գիշերը կը մօտենար և ետ շատ տը-խտի էր: Կարծես գիշերային մութին ազդեցութեամբ հոգեկան տեսութիւնս մթաղնեցաւ, մինչ անկողնիս մէջ եր-կնցած կ'ողջունէի խաւարաւոր գիշե-րը: Իզուր տեղ աշխատեցայ տանել այն Ձեռքը, որ իմ ձեռքէս բռնած էր կամ այն Ոյժը որ իմ ոտքերուս առաջ-նորդած էր ցից արտաքին ճամբուս վը-րայ: Վերջապէս ընկճած սիրտով մը հարցուցի:

Ինչո՞ւ իմ Տէրս իր գաւաղներուն հետ այսպէս կը վերաբերի: Ինչո՞ւ այսչափ շատ անգամ այսպիսի սուր և դառն ցաւերով կ'այցելէ գիւ: Ինչո՞ւ Ան կը թոյլատրէ որ այսչափ երկարատե տկա-րութեամբ մը արգելուիմ իր գաւաղնե-րուն ծառայելէ, իմ բուն փափաքիս հակառակ:

Իմ այս անբեցուցիչ հարցումներուս պատասխանուեցաւ զարմանալի լեւուով մը: Իմ սրտիս ձայնէն տարբեր թարգ-մանի մը պէտք չունեցայ այս լեզուն հասկնալու համար:

Պատիկ սենեակիս մէջ տիրող լու-թիւնը կը խանդարուէր միայն վառա-րանի մէջ վառող փայտին ճարճատիւ-նովը: Այնպէս կարծեցի թէ ճնճողու-մը պատուհանիս տակը անուշ ձայնովը կ'երգէր:

Ի՞նչ կրնայ ըլլալ այս, անշուշտ կա-րելի չէ որ այս եղանակին և գիշերային պահուն թռչուն մը երգէ: Այդպիսի նուագ մը նորէն լսուեցաւ նսաղուն և պարզ եղանակով մը: «Այդ ձայնը վա-ռարանին մէջի փայտէն կուգայ», ըսաւ բարեկամս:

Կրակը փայտին մէջ թաքնուած և գանակը դուրս կը հանէր:

Հաւանօրէն մայրին այս եղանակը իր մէջը ամփոփած էր, երբ ան խաղաղօրէն կը մեծնար եւ անոր ճիւղերուն վրայ թռչունները ուրախութեամբ կը դնէին եւ արեւի ճառագայթները անոր տերեւները կ'ոսկեզօծէին: Բայց այդ ժամանակէն ի վեր ծառը ծերանալով կարծրացած եւ կազմուող օղակները այս ամսորժաւոր եղանակը հոն նօթադրած էին: Վերջապէս կրակի բանալիները այդ օղակները բացին եւ եղանակին վերադարձուցին օգնեցին: Տառապանքի հոլը եթէ մեր մէջ այսպիսի զոհաբանութեան երգեր յառաջ կրնայ բերել, այն ատեն մենք իրապէս կը սրբազործունք եւ Աստուած ալ կը փառաւորուի:

Թերեւս մեզմէ շատերը այս պող եւ կարծր փայտի պէս անզգայ պիտի մնայինք, եւ ոչ մէկ եղանակ մեզմէ զուրս պիտի չելլէր, եթէ Աստուծոյ հանգէպ վստահութեան եւ Անոր կամքին յանձնումի կրակը մեզ չէր այրեր:

Սիրտս մխիթարութեամբ լեցուեցաւ վառող կրակը զիտելով:

Կրակի մէջ երգելի կարենալ՝ Այո՛, եթէ մեր կարծրացած եւ անհոգ սիրտերը միայն այս կերպով պիտի կրնան ներգոյնակ եղանակ մ'արտազրել, թո՛ղ կրակը նախկինէն հօթնապատիկ աւելի՛ սաստկութեամբ վառի:

ԹԱՐԳՄ. ՏԻԿ. Ե. ՔԵԹԵՆՃԵԱՆ

Համեստօրէն փայլէ ի պատիւ անոր որուն լոյսը փոխ կ'առնես. փայլէ ոչ թէ քո՛ւ փառքդ չուցնելու, այլ Անոր՝ որ քեզ խաւարէն զկայ ի իր հիանալի լոյսը կ'առնէ: Եթէ մենք լոյսի զաւակներ ենք մեր չղացումը պէտք է փառարանէ Հոյսերու Հայրը:

ԲԱՊԸՐԹ ԼԵՅԹԸՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՊԱՍԼՊԷՔԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ս. Գրոց երկիրներու Կիրակնօրեայ Դպրոցները միութիւն մը կազմեցին, որուն գործադիր ժողովին նախագահն է Մր. Շիրըր, վճարեալ երեցական Պօրտէն: Այս Միութեան նախաձեռնութեամբ Ապրիլ 8—13ին, Պալատէքի մէջ կատարուեցաւ կրօնական զաստիարակեան պատմական համաժողով մը, առաջինը իր տեսակին մէջ Մերձաւոր Արեւելքում: 73 պատուիրակներ եւ հիւրեր ներկայ գտնուեցան նիստերուն, իսկ 24 պատուիրակներ, թէպէտ բացակայ, բայց հոգեկան հաղորդակցութեամբ կը մասնակցէին ժողովին: Եզրապատէն Ղրպաի երեցական եկեղեցին, որ 20000 հաղորդակից անդամներ ունի, կը ներկայացնէր Վեր. Շէյխ Տուէյրի որ Հօսանկէլէսի Կ. Դպրոցի միջազգային համաժողովին անդամակցած էր: Պաղեստինէն մօտ տասնեակ մը երիտասարդներ եւ երիտասարդուհիներ մասնակցեցան ժողովին, ներկայացնելով Անկլիկան եւ կեղեցին եւ Քուէյքըր հաստատութիւնները: Ընտրեալ անձնաւորութիւններու խումբ մը կը կազմէին Ամերիկեան պատուիրակութիւնը, որուն անդամներէն էին Տր. Բ. Հափքինգ՝ համաշխարհային Կ. Դպրոցի Ընկերակցութեան քարտուղարը, Տր. Բէֆթի՝ կրօնական զաստիարակութեան փրօֆէսօր, Մր. Վօրիս՝ Բէլիֆի քարտուղար, Պր. Լեւոն Զէնեան որ Սուրիա մնաց Հայ Առաք. Եկեղեցիին մէջ կրօնական զաստիարակութեան գործով զբաղելու:

Պատուիրակներուն մեծամասնութիւնը սակայն կը ներկայանէր Սուրիոյ Արար Երեցական եւ Հայ Աւետ. եկեղեցիները, միսիսնարական ընկերակցութիւնները,

որբանոցները, դպրոցները: Հայ Առաք. եկեղեցին կը ներկայացուէր յանձին Գեր. Տ. Բարգէն Եպօ. Կիւլէէրեանի եւ Արտաւազգ Վրդ. Սիւրմէեանի, առաջնորդ Հալիպի: Ժողովի մասնակցող Հայերու թիւն էր 20:

Ժողովը ամէն օր եօթը նիստեր կու- նենար հետեւեալ մասնաւոր նիւթերու յատկացուած, որոնցմէ իւրաքանչիւրին մասին ամէն օր տարբեր անհատներ կը խօսէին. աղօթաժողով, Յիսուսի ուսուցանելու կերպը, ինչպէս պէտք է սորվեցնել Ս. Գիրքը, կրօնական դաստիարակութեան նպատակը, դաստիարակութեան միջոցները, տեղեկագրութիւն, ընդհանուր նիւթերու շուրջ ճառեր: Տր. Հափքինդ, Տր. Րէֆըթի, և Տր. Ուսյլտըր Ժողովին մէջ ներշնչող տպաւորութիւն թողուցին և անոր ուղղութիւն տուին: Գեր. Բ. Եպօ. Կիւլէէրեան Ապրիլ 11ի դիշերը խօսեցաւ «Կրօնական դաստիարակութիւնը Հայ Առաք. եկեղեցիին մէջ» նիւթին վրայ, իոր կը յուսանք «նոր Աւետարներ»ի յաջորդ թիւին մէջ հրատարակել ամփոփ կերպով: Այս միջադպային եւ միջյարանուանական ժողովը՝ նոր սերունդը քրիստոնէական նկարագրով պատրաստելու համար եկեղեցիներու մէջ համագործակցելու և կրօնական դաստիարակութիւնը գիտական մեջոցներով աւելի՛ զօրաւոր հաւատքով և տաք նուիրումով յառաջ տանելու հողի մը ներշնչեց ներկաներուն:

ՖԻՆԱՆՍԱՅԻ ԲՈՂ.ՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Պէյրութի մէջ ներկայիս կայ Ֆրանսայի Բող.ներու փոքր համայնք մը, որ Ապրիլ 15ին իր երրորդ տարեգարծը տօնեց Աղջկանց Գոլէճի (Ֆրանսական Բող.) մէջ, ուր հրաւիրուած էին տարբեր բող. համայնքներէ մօտ հարիւր անձեր, որոնք մասնաւոր պաշտամունքէ մը վերջ ընթերցող մը հիւրասիրուեցան դպրոցին

պարտէզին մէջ: Համայնքին ժրաջան հովիւն է Փաթէօր Մօրիս Պրէ, ուրուն կ'աշխատակցի իր ազնիւ տիկինը:

1925ի վերջը Ֆրանսայի Բող. Դաշնակցութիւնը երկու ընկերութիւններ կազմած էր, որոնց կառավարութեան կողմէ տրուեցաւ, Վերսայլի Դաշնագրին համաձայն, Գերմանական նախկին բարեգործական, կրթական, եւ կրօնական նպատակներով կառուցուած շէնքերը: Երկու պատուիրակութիւններ, զխաւրութեամբ ծերակուտական էքարտի եւ Գնդապետ Կոթիէի, Պէյրութ եկան յիշեալ շէնքերը առնելու և զանոնք զործածելի վիճակին մէջ դնելու համար:

Ներկայիս Սուրիոյ Ֆրանս. Բող. Աւետ. Ընկ.ը կը վարէ կրօնական գործը: Իսկ Մերձ. Արեւելքի եւ Սուրիոյ մէջ Բող. շահերու Ֆրանս. Ընկերութիւնն ալ կը վարէ բարեսիրական կրթական գործը: Սա վերջինին հովանաւորութեան տակ կը գտնուի «Գօրիժ Տե Ժեօն Յիյ» դպրոցը, Ֆրանսական լիսէի համալսար, և ակնաբուժական դարմանատուն մը Պէյրութի մէջ, և նման դարմանատուն մ'ալ ձէպէլ Տրիւպի Սուէյսա քաղաքին մէջ:

ԴԱՄԱՍՍԿՈՍԻ ՄԷՋ

Տամազկոսի Հայ Աւետ. համայնքը տակաւին տխուր վայրկեաններ կ'ապրի իր սիրելի հովիւին, Վեր. Ն. Սարեանի հրաժարման առթիւ: Վեր. Ն. Սարեան հակառակ իր հրաժարումին, տեղի տալով իր ժողովուրդին իրեն յայտնած սիրոյն առջեւ տակաւին կը շարունակէ իր պաշտօնը, և յուսալի է որ ետ առնէ իր հրաժարականը: Ապրիլ 14ի Կիրակին Պաալպէքի համաժողովին Հալէպի պատուիրակներէն Տիար Ն. Իշխանեան, Պատ. Ա. Հատիտեան և Տ. Ժ. Խրլոբեան անցուցին այս ժողովուրդին մէջ: Նոյն օրը իրիկուան քարոզը տուաւ Տ. Ժ. Խրլոբեան և ապա Պատ. Ա. Հատիտեան:

եան երկտասարդներու կրօնական դաստիարակութեան պէտքը շեշտեց: Համալինքը ունի իր զպրօցք բաղկացեալ 100 աշակերտներով մանկապարտէզէ մը և 90 աշակերտներով նախակրթարանէ մը, Պր. Արզարեանի, աւագ ուսուցչին կարող հոգածութեան տակ: Այս համայնքն ևս, ուրիշ մի քանիներու նման անմիջական պէտքն ունի եկեղեցական եւ զպրօցական շէնքերու: Կրօնական պաշտամունքը կը կատարուի Երիցական եկեղեցիին մէջ, և իւր զպրօցին շէնք կը գործածուի ընդարձակ, օգտաւէն բայց չափ հին տուն մը:

Տամատի հայութեան թիւը զգալիօրէն պակսած է, վերջին զէպքերու պատճառաւ, որուն առթամ փնտնները և աւերակները տակաւին նոր այցելովի մը ուշադրութիւնը կը գլուհեն բայց քաղաքը խաղաղ վերաշինութեան շրջանի մը մէջ մօտ կ'երևայ: 5000 է հայերու թիւը, որուն 500 ը աւետարանական:

Մ. ՓԱԼԱՆ ՄԱՆՁԵՐՈՒ Բ.

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

Հալէպի կուսակալութեան հանրային կրթութեան քննիչ Մ. Փալան, Ապրիլ 27 ին այցելեց Պօյզ Հայ Աթուլը, ընկերակցութեամբ իր թարգմանին և Վիր. Կ. Յարութիւնեանի: Երկու ժամի չափ պտտեցաւ հաստատութեան զանազան մասերուն մէջ, ան խօսեցաւ բարձրագոյն կարգերու և նախապատրաստական բաժնի աշակերտներուն: Ան մասնաւոր ազնարկումներ ըրաւ զպրօցին կրթութեան առած գործնական ուղղութեան մասին, որուն զանազան օրինակները տեսաւ ան, — տոմարակալութեան դասին հաշուեկիրքերը, ուսանողներու կողմէ հրատարակուած և տպուած ամսաթիւերը, կենդանաբանութեան դասին նօթատետրերը, ուսանողներու կողմէ գորգարուած պատկերներով կենդանիներու՝ որոնք աշխատանոցին մէջ անգա-

մահատուած եւ մանրադիտակին տակ քննուած էին, բնագիտութեան և քիմիագիտութեան գործիքները, Բատիօյնի ուր գործիքը, մարզավայրը, նոր պատրաստուած Դաշտային Հանդէսի օրուան խաղերուն համար: Մ. Փալան այցելեց նաև գիշերօթիկներու բաժինը և տպարանը ուր տեսաւ անօրէնի հրակոչութեան տակ աշակերտներու կողմէ կատարուած կազմարարութեան և տըպագրական զանազան նմուշներ:

ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՏՈՒՄ

Պէյրութի մէջ Ապրիլ 20ին կատարուեցան միջգաղութային օգիմպիական խաղերու տարեկան մրցումները, մասնակցութեամբ ինը գաղութներու: Առաւելագոյն նիշերը ստացաւ Պէյրութի Ամերիկեան համալսարանի նախապատրաստականը և չորրորդ հանդիսացաւ Հալէպի Մանչէրու Բարձրագոյն Վարժարանը, զոր ներկայացուցին Պ. Պ. Ե. Տ. Մկրտիչեան, Ճ. Միսիրեան, և Կ. Յ. Շէօհմէլեան: Միսիրեան 100 մէթր վազքի մէջ և բարձր չուանէ (1.515 մէթր) ցատկելու մէջ առաջնութիւնը խըլեց, և Շէօհմէլեան երկրորդ հանդիսացաւ վերջինին մէջ 1.50 մէթր բարձր չուանէ ցատկելով:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԻՐԱՆՏԱՍԹԻ ՏՂՈՒՆ ՆՈՐ ԱՆՈՒՆԸ

Չմեռուան պաղ գիշեր մը իրլանտացի աղայ մը փոշոցը կը կենար, առանց բնակարանի և բարեկամի:

Այս աղան գէշ ճամբու առաջնորդուած ըլլալով գողերու ընկերացած էր: Նոյն գիշերը անոնք գողութիւն մը ընել որոշած էին և քաղաքին որոշ մէկ փոշոցը ժամադրութիւն ըրած էին: Երբոր փողոցին անկիւնը կեցած պաղելով և զողալով իր ընկերներուն կ'սպասէր ձեռք մը ուսին վրայ զրուեցաւ: Դիշերը մ. թ ըլլալուն միայն երկայն ստուեր

մը կրնար տեսնել որ իր քովը կը կե-
նար: Վախ՛նչ զողաց. բայց անուշ ձայն
մը ըսաւ իրեն. «Տղայ, այս գիշերուայ
մուտքին հոս ի՞նչ կ'ընես, քանի որ զործ
մը չունիս, դուն գնա քնացիր:»

— Ես ոչ տուն, ոչ ալ անկողին ու-
նիմ:

— Այդ ցաւալի է խեղճ տղայ, եթէ
ես քեզի տուն մը եւ անկողին մը հայ-
թայթեմ երթալ կ'ուզե՞ս:

— Անշուշտ, պատասխանեց տղան
կտրուկ կերպով մը:

— Լաւ, այսինչ փողոց, այսինչ թիւ
տան մէջ անկողին մը կրնաք գտնել, ը-
սաւ մարդը, եւ դեռ խօսքը չ'աւարտած
տղան ձամբայ ելաւ: Կեցի՛ր, ինչպէ՞ս
ներս պիտի մտնես, ուէ մէկը առանց
անձագիրի ներս չի կրնար մտնել: Ա-
հաւասիկ անցապիւր մը, կրնա՞ս կար-
գալ:

— Ո՛չ, Տէր:

— Լաւ, ուրեմն, յիշէ որ անցապի-
ւրդ Յովհ. Յ. 16է: Մի մոռնար, եթէ
ոչ քեզ ներս չ'են թողուր: Յովհ. Յ. 16:
Այս անունը բան մըն է որ քեզի բարիք
պիտի ընէ:

Ուրախութեամբ տղան վազեց իր դա-
սը կրկնելով եւ շուտով գինքը այն փո-
ղոցին մէջ գտաւ, եւ երկաթեայ դրան մը
առջեւ յիշուած թիւը տեսաւ: Սիրտը
զողաց, դրան մեծութիւնը գինքը վախ-
ցուց: Ի՞նչպէս կրնար ներս մտնել:
Վախով գանգակը հնչեցոկց. «Գիշերա-
պահը դուռը բացաւ եւ խիտ ձայնով մը
հարցուց: Ո՞վ է ան:

— Ես եմ, Տէր, Յովհ. Յ. 16:

— Շատ լաւ, ներս մտէք: Տղան ներս մը-
տաւ:

Ան շուտով ինքզինք տաքուկ ան-
կողնի մը մէջ գտաւ ճերմակ ծածկոցնե-
րով, չոր երէք տեսած չէր իր կիսանքին
մէջ, Անկողնին մէջ քնանալու համար
սողին անդին դարձած ատեն ան խոր-
հեցաւ թէ այս անունը բարեգուշակ է,

անոր օձիքէն պէտք է բռնել: Հետեւալ
առաւօտ իրեն դաւաթ մը կաթ տրուած
էր, կաթը խմելէն վերջ այդ տունէն
զուրս ելաւ ու սկսաւ փողոցներուն մէջ
սողին անդին պատիւ, վախնալով որ իր
հին բարեկամներուն կը հանդիպի եւ մի-
եւնոյն ատեն խորհելով իր նոր անունին
վրայ: Երբ ամբողջի մը մէջէն կ'անցնէր,
կոխկրտուեցաւ ու անզգայ գետին ին-
կաւ. ամբոյսը ալ աւելի շատցաւ: Քիչ
վերջը բարի մարդոց ձեռքով ամենա-
մօտ հիւանդանոց մը փոխադրուեցաւ:
Հիւանդանոցէն ներս մտնելէն վերջ ըս-
թափեցաւ: Տըպլինի հիւանդանոցնե-
րուն մէջ սովորութիւն է հիւանդին կը-
րօնքն ալ արձանագրել իր անունին եւ
հասցէին հետ: Տղուն ալ հարցուցին թէ
ինք կաթուղի է թէ Բողոքական: Ան որ
մէկը ըլլալը լաւ չէր գիտէր եւ ըսաւ թէ
երէկ կաթուղի էր, բայց հիմայ Յովհ. Յ.
16: Այս պատասխանը բոլորը խնդա-
ցուց:

Անոր վերքերուն նայեցան եւ ապա
զայն արկածներուն սրահը փոխադրե-
ցին, ուր քիչ վերջ սոսկալի ջերմ մը ու-
նեցաւ, սրուն ազդեցութեան տակ միշտ
կը կրկնէր. «Յովհ. Յ. 16: ան ինծի բարիք
պիտի ընէր եւ չըրաւ:» Այս շարունակա-
կան ազդակները հիւանդները արթն-
ցուցին: Նոր կտակարանները զուրս
հանուած էին տեսնելու համար թէ ի՞նչի
կ'ակնարկէր, ի՞նչ կը նշանակէր:

Խեղճ տղան քիչ մը վերջ սթափեցաւ
եւ իր չորս կողմը նայել սկսաւ: Հի-
ւանդանոցը շատ ընդարձակ էր: Ան-
միջապէս ձայն մը կանչեց միւս անկող
նէն. «Յովհ. Յ. 16, ի՞նչպէս էք»:

— Ի՞նչպէս գիտէք իմ նոր անունս:

— Ինչպէս չգիտնալ: Դուք Յովհ.
Յ. 16ը կը կրկնէիք անդադար: Այս
բանը տղուն զարմանալի թուեցաւ:

— Զե՞ք գիտեր թէ այդ Ս. Գրքին
համարն է:

— Ս. Գրքը. ի՞նչ է այդ:

Տղան երբեք լսած չէր այդ գրքին մասին:

— Ինձի կարգա այդ համարը, ըսաւ տղան, եւ երբ խօսքերը լսեց ինքնիրեն ըսաւ. «Այդ շատ լաւ է. բոլորը սիրոյ մասին է. մէկ գիշերուայ համար չէ տունը այլ՝ յաւիտեան»: Տղան շուտ մը սորվեցաւ նոր համարը, իր ուրախութիւնը անսահման էր, որովհետեւ նոր անունէն աւելի մեծ բան մը գտած էր:

Օրեր անցան, հիւանդանոցին մէջ փոփոխութիւններ տեղի ունեցան: Սակայն մեր պատիկ հիւանդը երբեք ինքզինք առանձին չզգաց: Զեռքին մէջ Ս. Գիրքը ունէր ու սրտին մէջ այդ թանկագին գոհարը, Յովհ. Յ. 16ը, որ կը խորհէր թէ ի՞նչպէս շուտով կրնար գործածել: Ուրիշ հոգի մըն ալ կար, պէտք էր որ իր միջոցաւ Յիսուսի բերուէր: Իր մօտիկը ծեր մարդ մը կը պառկէր որուն հիւանդութիւնը ծանրացած էր: Առտու մը կանուխէն հիւանդապահուհի մը եկաւ ծեր հիւանդին քով եւ ըսաւ. «Փաթրիք, այսօր ի՞նչպէս էք»:

— Շատ գէշ, շատ գէշ:

— Բահանան եկա՞ւ քեզ տեսնելու, հարցոց հիւանդապահուհին:

— Օհ, այո, այդ գիւս աւելի գէշ ըրաւ, որովհետեւ Ս. իւզով օժեց գիւս, այս կը նշանակէր թէ պիտի մեռնիմ: Բայց ես, պատրաստ չեմ մեռնելու: Օհ, ի՞նչ պիտի ընեմ:

— Փաթրիք, ցաւալի է քեզ այսպէս տեսնել: Նայէ սա համրիչին, որ Պապին կողմէ օրհնուած է, այս քեզ պիտի ուրախացնէ: Այսպէս ըսելով գայն ծերունիին վիզը կախեց ու մեկնեցաւ: Բայց ի՞նչպէս համրիչ մը կրնար օգնել հիւանդի մը որ յաւիտեանակա՞նութիւնը պիտի զիմաւորէր չնեղուած մեղքերով:

— Ես պատրաստ չեմ մեռնելու, ինչ պիտի ընեմ, ինչ պիտի ըլլայ ինձի, կը կրկնէր շարունակ ծերունին:

Մեր պատիկ հիւանդը այս խօսքերը

լսեց. «Խեղճ մարդ, ըսաւ. ան, անցագրի մը պէտք ունի եւ փաթրիքի կանչեց ըսելով. «Ես բան մը գիտեմ որ Զեդի պիտի օգնէ: Վստահ եմ, ան ինձի օգնած է»:

— Շուտով պատմէ ինձի, աղաղակեց փաթրիք:

— Հոս է, մօտիկ ըրէ. «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը մինչեւ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ անոր հաւատայ չկորսուի, հապա յաւիտեանական կեանք ունենայ: Յովհ. Յ. 16»:

Այս խօսքերով ծեր մարդը իր մահուան ժամուն խաղաղութիւն գտաւ եւ յաւիտեանական կեանքը մտաւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կրօնք եւ Միջազայր ՏՐ. Ճ. Ե. ՄԷՐԻԼ
ՅՕԴՈՒՍԾՆԵՐ

Աստուածային Ներշնչում

ՎԵՐ. Ս. ՄԵԼԻՔԱՆԵԱՆ

Երբ Ժխորը Դադրի

ՊԱՏ. ՅՈՎՀ. ԱՐԳԱՐԵԱՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ ՌԵՏՈՒՆԻ

Ներքին Աւեստաւանութիւն

Ա. Ա. ՇԻՐԱԾԵԱՆ

Դիւանադրութեան Ոյժ

ՏՕԲԹ. Ֆ. ՅՈՎԱՆԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

Բայցերգ

ՏՕԲԹ. Ա. ՃԵՊԵՃԵԱՆ

Օրինակելի Անձնագրոսրիւն

Կրակին Երգը ՏԻԿ. Ե. ԲԵԹԷՆԾԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆԲ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Արտօնատէր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան

Տնօրէն-Խմբավար Տ. Ճ. Խրլորեան

Տարեկան բաժնեկրի— Սուրիա, 1.50

Սուր. սակի. արտասահման 1.50 տողար:

Հասցէ—

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE